

Ծիրան

Ժամանակի սահմանափակում՝ 2 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Այգեգործ Ճատուրն այս տարի ծիրանի առատ բերք է ստացել: Նա ցանկանում է բերքը տեղափոխել մայրաքաղաք, որպեսզի հասցնի այն շուկա և պահածոների գործարաններ: Դրա համար նրան պետք են բեռնատարներ: Ճատուրը գտել է բեռնափոխադրման երկու կազմակերպություն: Առաջին կազմակերպությունը առաջարկում է մեքենաներ, որոնցից յուրաքանչյուրում տեղավորվում է n_1 հատ ծիրանի արկղ, և տեղափոխումն իրականացնող մեկ մեքենայի համար պետք է վճարել c_1 դրամ (անկախ մեքենայում արկղերի քանակից): Երկրորդ կազմակերպության մեկ մեքենայի մեջ տեղավորվում է n_2 արկղ ծիրան, և պետք է վճարել c_2 դրամ: Ճատուրը ցանկանում է տեղափոխել n արկղ ծիրան: Գրեք ծրագիր՝ պարզելու համար, թե Ճատուրը առավելագույն որքան գումար պետք է վճարի ծիրանը այգուց մայրաքաղաք տեղափոխելու համար:

Մուտքային տվյալներ

Մուտքի առաջին և միակ տողում տրված են n , n_1 , c_1 , n_2 , c_2 բնական թվերը ($1 \leq n, n_1, c_1, n_2, c_2 \leq 10^5$):

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ ծիրանը տեղափոխելու համար մինիմալ անհրաժեշտ գումարը:

Օրինակ

Մուտք	Ելք
10 3 7 6 4	8
10 3 7 4 8	22

Բացատրություն

Առաջին օրինակում անհրաժեշտ է օգտվել երկրորդ կազմակերպությունից՝ վերցնելով 2 բեռնատար և ծախսելով $2 \cdot 4 = 8$ դրամ: Երկրորդ օրինակում հարկավոր է վերցնել 2 բեռնատար առաջին կազմակերպությունից և 1 բեռնատար երկրորդ կազմակերպությունից՝ ծախսելով ընդհանուր $2 \cdot 7 + 1 \cdot 8 = 22$ դրամ: